



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

84

n-41



19 NOV 2010  
20 APR 2006

5230 ԳՕԼ ԲԷՆԱԳԷՆ

84-3

Ռ-45  
ԱԿ. Բ-45  
արքերի

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ի Մ Ա Յ Ր Ը



Յրանս. Թարգմ. Ք. Օհանեան.

9660

№ 1.



Բ Ա Գ Ո Ւ  
Տ Պ Ա Ր Ա Ն „Ա Ր Օ Ր“  
1904



24.08.2013  
0005 99A 0 2

7535



Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ի Մ Ա Յ Ի Ը

Дозволено Цензурою. Тифлисъ, 10 Марта 1904 г.

Ամբողջ Լագէյ-Մէլիէ գիւղը խիստ հեռա-  
բրբրոված էր նրանով, որ պառաւ Լորօն  
սկսել էր յաճախակի այցելել գիւղական վար-  
ժապետին և միշտ երկար մնալ նրա մօտ:

Ահա արդէն մի արմողջ ամիս է, ինչ որ  
երեկոյեան, ժամի հինգի և վեցի մէջ, գիւղա-  
ցիները նկատում էին, թէ ինչպէս Լորօն  
օրօրվելով, բայց դեռ առողջ քայլուածքով,  
անցնում էր փողոցից, մոխրագոյն շալն ուսե-  
րին, քաշում էր սւտումնարանի զանգակը, և  
ծեր Հէմբլօն ինքն էր գուռը բաց անում:

Ատենք, նա խօսի չէր էլ աշխատում իր  
այցելութիւնները քօղարկել. պառաւը բարկում  
էր հարկաններին, որոնք լուացք էին անում  
կամ թէ շէմբի առաջ կանգնած՝ դրուցում էին.  
աչ ու ձախ ողջոյններ էր մատուցանում փո-  
ղոցում պատահած ծանօթներին և, մինչև

անգամ, երբ նրանից հարցնում էին. «Այդ ուր էր գնում, Լորօ տատիկ», — նա պատասխանում էր առանց քաշվելու. «Գնում եմ այցելելու պ. Հէմբլօին»:

Սակայն երբ հարևանները ցանկանում էին նրան կանգնեցնել և լսուել գիւղական շար ու բարիքի մասին, Լորօն չը գիտնալն էր գնում նրանց մտադրութիւնները, կամ թէ մի բանի բողէ մնում էր նրանց հետ և յետոյ շարունակում էր իր ճանապարհը, առարկելով, թէ ժամանակ չունի:

Յամենայն դէպս, նրա ամենօրեայ և երկարատև այցելութիւնները ծեր Հէմբլօին անսովոր երևոյթ էին ներկայացնում գիւղականների աչքում:

Ի հարկէ, այդ բոլոր ժամանակը վարժապետը չէր կարող նամակներ գրել պառաւի համար. և ունէր գրել. բացի երկու հոգուց, պառաւն ուրիշ ազգականներ չունէր. իրանից կրտսեր քոյրն էր, որ բնակվում էր Լադէյ—Մէլիէից մի բանի վերստ հեռաւորութեան վրայ. իսկ սրա տասնհինգ տարեկան աղջիկն ապրելով մօրաբրոջ մօտ, օգնում էր նրան սնային գործերում. մէկ էլ պառաւը մի որդի ունէր, որը Պարիզում ինչ-որ բաներ էր գրտում լրագիրների և ամսագիրների մէջ, մի

խօսքով՝ «գրող» էր, ինչպէս իրանք էին անուանում: Բացի նամակ գրելուց՝ վարժապետը օգնում էր նրա ամսահաշիւները կազմելու, որ այնքան էլ բարդ չէին, իսկ յետոյ... յետոյ ինչով էին զբաղվում մինչև մութ ընկնելը: Եւ ամեն օր:

Բօրիկէ ծերունին, որին հիւանդութիւնը բևեռել էր աթոռին, ուստի ամբողջ օրերն անց էր կացնում՝ նստած իր տան առջև, իսկ երեկոները՝ պատուհանի մօտ, — վկայում էր, թէ երեք շաբթվայ ընթացքում պառաւ Լորօն բաց չէր թողել ոչ մի երեկոյ և ամեն օր անցնում էր իր տան մօտից, գիմելով գէպի ուսումնաբանի կողմը:

Այդ օտարօտի վարժունքը առիթ էր դարձել ենթադրութիւնների, և կանանց անէկօսէներին վերջ չէր լինում: Այս, այո, նրանք՝ վարժապետը և Լորօ տատիկը վաղուցվայ ծանօթներ էին: Քսան և հինգ տարի սրանից առաջ, երբ Հէմբլօն ուսուցիչ նշանակվեց Լադէյ-Միլիէ գիւղում, նա իսկոյն ուշադրութիւն դարձրեց Լորօի որդի ժանի վրայ, որը մի կայտառ երեխայ էր և ութ տարեկան հասակում իմանում էր այն բոլորը, ինչ որ ուրիշները տասերեք տարեկան հասակում միայն գիտէին.

Հէմբլօն այն ժամանակները մօտ երեսուն տարեկան մի գեղեցիկ և վայելչակազմ երիտասարդ էր: Լօրօն երկու կամ երեք տարով միայն մեծ էր նրանից, սակայն գեռ բոլորովին թարմ էր, և որպիսի հրաշալի չէկ մագեր ունէր: Նրա ամուսինը նոր էր մեռել, և շար լեզուներն ասում էին, թէ Հէմբլօն հէնց առաջի օրվանից սկսեց երիտասարդ այրու ետևից լծրիւ գալ: Հաւանական է, որ նա հէնց այդ պատճառով մերժել էր ընդունել աւելի բարձր պաշտօն առարկելով՝ թէ ինքը փառասէր չէ և թէ գերադասում է գիւղում մնալ:

Երևի, դրա համար էր, որ նա միշտ վրադժամ էր լինում այրիի երեխայով, և վերջ ի վերջոյ մօրը համոզեց՝ երեխային ուղարկել Պարիզ ուսումը շարունակելու:

Եւ ահա այժմ այդ տղան մեծացել է և ապրում է Պարիզում. հաւանակտն է, որ նա այնտեղ քէֆեր է անում և անառակ կեանք է վարում, փոխանակ աղնիւ և աշխատասէր երկրագործ լինելու:

Այո, այո, Հէմբլօն քսան և հինգ տարի շարունակ հառաչում էր այդ կնոջ համար, ամենքը նկատում էին այդ: Սակայն ո՞վ է իմանում: Կարելի է այժմ, ծեր հասակում, Լօրօն վերջապէս խղճաց նրան...

Գիւղի երեխաներն այնքան հեռու չէին տանում իրանց ենթադրութիւնները: Երբ նրանք փողոցում պատահում էին Լօրօ տատիկին սուսմնարան վնալիս. ծիծաղելով միմեանց հրում էին և ետևից սսում. «Լօրօ տատիկը ահա ուսումնարան է գնում: Այսօր վարժապետը նրա ականջներից մի լաւ կը քաշի: Արեստիդ, հարցրու նրանից, արդեօք չի ցանկանում, որ իմ այրուէնը նրան փոխ տամ»:

Եւ երեկոյեան երեխաները պատմում էին իրանց տանը, թէ Լօրօ տատիկը կարգալ է սովորում: Ի հարկէ, ոչ որ չը հաւատաց: Պէտք է մարդ խելըը կորցրած լինի, որ վաթսուն տարեկան հասակում սկսի կարգալ սովորել, իսկ պառաւի պլուխը գեռ իր տեղն էր: Ասենք նա իր երեխայի ետևից շատ էր ընկած, բայց այդ միակ բանն էր, որում կարելի էր պառաւին մեղադրել:

Սակայն երեխաների տարածած լուրը ճիշտ էր: Լօրօ տատիկը սկսել էր կարգալ սովորել: Այդ էր նրա ամենօրեայ այցելութիւնների գազանիքը. նրա սիրահարական ժամերն անցնում էին «գիր կապելու» շարչարանքի մէջ

Հէմբրօ ուսուցչի հետ, որը նոյնքան ծեր էր և կնճռտած, որքան Լօրօ տատիկը:

Կարգալ սովորելու միտքը վաղուց ի վեր էր պտտում նրա գլխում, բայց միշտ ինքն իրան ասում էր. այդ գործի համար ես չափազանց ծեր եմ: Վերջ ի վերջոյ ցանկութիւնը յայլթեց և նա գիրքը ձեռքն առաւ... Նրա համար ցաւալի էր, որ անկարող է գտնվում իր որդու շարագրած գրքերը կարգալ: Չէ որ նա առաջի գրողն է Պարիզում, և «մայրաքաղաքում» միմիայն նրա մասին էին խօսում: Իր մօրը գրած նամակները մէջ նա այդ մասին ոչինչ չէր հաղորդում, որովհետև նա չափազանց համեստ էր. սակայն մօր զգայուն սիրտը զուշակում էր այդ, երբ գլուխը կորցրած, արտասուքի շիթերն աչքերին, նա լսում էր որդու ուղարկած նամակները, որ բարձրաձայն կարդում էր ուսուցիչը:

Բայց վերջին անգամ, երբ արդէն ըստ սովորականի եկել էր մօրն այցելելու նրա անուանակոչութեան օրվայ առիթով, նա չը կարողացաւ ամբողջովին թագցնել իր փառքը: Իբրև երջանիկ և ուրախ մայր նա բազմաթիւ հարցեր էր տալիս որդուն, որը կամաց կամաց սկսեց պատմել Պարիզում վարած իր կեանքից և վերջ ի վերջոյ ստիպված էր խոս-

սովանելու, որ ինքը հռչակաւոր մարդ է: Յետոյ նա շարունակ փոզ էր ուղարկում մօրը... Ուրեմն նա շատ էր վաստակում, որովհետև չէ որ Պարիզում ապրողը ստիպված է շատ մսխել...

Վերջապէս՝ բոլոր լրագիրները միշտ խօսում են նրա մասին: Գեռ անցեալ աշնանը նրա հեռանալուց մի քանի օր անցած, Պ. Հէմբրօն տ. Լօրօին կարգաց մի լրագրական նկատուութիւն, ուր հաղորդում էին ծանօդ Բրօի նոր գրքի լոյս տեսնելու մասին: Պառան իմանում էր, որ իր ծանն այդպէս էր ստորագրում, բայց գրքի անունը չէր յիշում, — սակայն որքան էին գովաբանում, եթէ լսէիր:

Ճիշտն ասած, նա լաւ չը հասկացաւ, թէ ինչ է նշանակում «Պարիզի կեանքի տականքները սրամիտ ուսումնասիրող», «Նոր ժամանակեայ Աթէնքի խայթող Արիստօֆան», կամ հրաշալի և յեղաթիւրված հեղինակ «Նամակներ առ Ստոյալիա» գրքի, — ինչ անենք. յամենայն դէպս մայրն երանութեան զագաթնակէտի վրայ էր գտնվում ուսուցչի ընթերցանութեան ժամանակ և ուրախութիւնից կարմրեց, երբ Հէմբրօն կարգաց «տաղանդաւոր հեղինակի նոր գրքի յաջողութեան» մասին: Բացի դրանից գաւառական փորրիկ լրագիրը նկա-



տողութեան վերջում աւելացրել էր, թէ արտատպած է «Echo de Paris»-ից. իսկ պէմբըն հաւատացնում էր, որ այդ լրագիրը մայրաքաղաքում հրատարակվողներից ամենալաւն է և որ «այդ լրագրում գրելը նոյնքան պատւաբեր է, որքան գէներալ լինելը»:

Այս անգամ Լօրօն այլևս չկարողացաւ դիմանալ խիստ տխրալի երևոյթ է, որ նա չէ կարող ծանօց մի տող կարգալ: Հաւանական է, որ ինքը՝ նրա մայրը այդ տեսակէտից միակն էր, որովհետև ամենքը նրան կարգում են: Նրա սիրելի երեխան, որին նա պաշտում էր, նորա ծանր, հռչակաւոր մարդ է գառել, և մայրը անկարող է նորա գեղեցիկ շարադրութիւնները կարգալ: Եւ հէնց նոյն երեկոյեան, երբ վարժապետը ծանի գրած գրքի մասին յօղուած պարունակող լրագիրը բերել էր կարգալու, Լօրօն հայորդեց նորան իր մտադրութեան մասին... Ծեր Հէմբըն սկզբում մի քիչ հեգնեց... Սակայն միւս օրը մի այլբուբէն բերաւ: Վճռեցին, որ երեկոները, աշակերտներին արձակելուց յետոյ, Լօրօն կը գայ ուսումնարան գաս առնելու:

Երբ պառաւը դայիս էր ժամը հինգ և կէսին, գասարանն գատարկ էր լինում: Նրանք երկուսով նստում էին վառարանի մօտ և գրքով գրագվելուց առաջ մի քիչ զրուցում էին: Այդ խօսակցութիւնները, հակառակ իրանց կամքի, միշտ պտտում էին «Թանկագին տղայի» շուրջը. խօսում էին նրա վերջի նամակի մասին, նրա փառաւոր կենցաղի մասին, որ նա վարում էր այնտեղ, այն խորհրդաւոր Պարիզում, ուր գնում են միշտ փառք և փող որոնող մարդիկ, կամ թէ այն հեռաւոր, անցած—գնացած օրերի մասին, երբ ծանր դեռ սովորում էր Լագէյ-Մէլիէի ուսումնարանում:

Վառարանի կրակի աղօտ լոյսի տակ յիշողութիւնները բուսնում էին և ծագկում... Երբեմն Հէմբըն ընկնում էր բանաստեղծական աւիւնի մէջ. «գիտէք, տիկին Լօրօ, ես միշտ նախագուշակում էի, որ այդ երեխան ուրիշներին չըպիտի նմանի, որ նրանից պիտի մի բան դուրս գայ: Պէտք էր տեսնել, թէ սրպիսի շարագրութիւններ էր գրում գասարանում: Գրածը սահուն էր, ախորժելի, ինչպէս իսկական գրողի... Ես միշտ ասում էի նրան.—տղաս, եթէ քո տեղ ես լինէի, կը գնայի Պարիզ, կը մտնէի մի մեծ լրագրի խմբագրութեան մէջ և գէներալի աստիճան կըստանայի: Քո տա-

դանդն ունեցողին չարժէ այստեղ նստել և հօ-  
զը փորփորել: Այժմ տեսնում էք, տիկին, իմ  
խորհուրդներն իզուր չանցան»:

Պառաւր գլխով էր անում ժպիտն երեսին  
և շնորհակալութեամբ սեղմում էր նրա ձեռքը:  
Յաճախ, իր նախկին աշակերտի մասին յիշո-  
ղութիւններից առաջացած հպարտութիւնն յա-  
ղեցնելու համար, Հէմբլօն արկղից հանում էր  
նրա «ոճի վարժութիւնները», որոնց գանձի  
պէս պահում էր: Եւ ծերունիները քսաներորդ  
անգամ կարգում էին երկուսով այդ տեօրակ-  
ները և նշանաւոր տեղերն ընդգծում էին բա-  
ցականչութիւններով:

— Ընչպէս է, տեսնում էք, ձիշտ չէ, որ-  
քան սիրուն է արտայատված: Եւ այդ բոլորն  
այն ժամանակ, երբ նա դեռ տասը և մէկ տա-  
րեկան էր:

Եւ որպիսի բարի երեխայ էր: Փառքը նրան  
չը շնորհեց: Այժմ, երբ արդէն ականաւոր մարդ  
է դարձել և բոլորը նրա մասին խօսում են,  
նա դարձեալ չէ մոռանում իր պառաւ մօրը, ժա-  
մանակ առ ժակմանակ փող է ուղարկում, իսկ  
ամեն տարի նրա անուանօկոչութեան օրը գա-  
լիս է գիւղը և հետը ծաղիկներից հիւսած մի  
մեծ փունջ է բերում մօր համար: Ձիշտ չէ,  
որքան սիրալիր է նա: Թողնել իր բոլոր նշա-

նաւոր ծանօթներին, իր ուրախ կեանքը և  
3—4 օրով դալ պառաւ գեղջիւհու մօտ, մի  
այնպիսի մօր օրը կարողն անգամ չէ  
իմանում: Երեւի նրա աչքում մայրը խիստ յի-  
մար պիտի երևար:

Այդ խօսքերին հետևում էր մի խոր հա-  
ռաշանք. պառաւը սրբում էր թացացած ակ-  
նոցները և բաց էր անում այրուրեներ: Ե՛հ,  
եկող տարի, երբ ծանր նորից գիւղն եկած  
կը լինի, սրբան կը վարձանայ, տեսնելով թէ  
ինչպէս մայրն նրա գրքերից մէկը բաց է ա-  
նում և սկսում է կարդալ երես երեսի հտեից:

Բայց պէտք է շտապել. մինչև իր անուա-  
նակոչութեան օրը մնացել է միայն երկու ա-  
միս: Անհրաժեշտ է կարդալը լաւ իմանալ. ո-  
րովհետև այդ Պարիզեան գրքերը շատ գծուար  
են լինում: Հէմբլօն հաւատացնում էր, թէ կը  
սովորեցնի. ի հարկէ, նրա ջանքերն անսպաս  
էին... բայց ինքն էլ շատ պառաւ էր:

Այդ մտքով սկսորված, նա իր գրքից չէր  
սրկվում և շատ անգամ կը շարունակէր դեռ  
սովորել, չը նկատելով անցած ժամանակը,  
եթէ ուսուցիչը նրան չը կանգնացնէր ասելով.  
«դէ, այսօրվայ համար բաւական է, լաւ աշ-  
խատեցի՛նք»: Պառաւը սրտաշարժ տոկոճու-  
թեամբ աշխատում էր անընդհատ, անսովոր

ջանքերից բոլորովին կարմրում էր և ուսուցչին զուարճութիւն էր պատճառում իր հառաջանքներով և յուսահատութեամբ, երբ մի բան նրան դժուարացնում էր: Նա ուզում էր միշտ առաջ դնալ, միանգամից կարգալ սկսէր:

— Այգպէս մի շտապէք, տիկին Լօրօ, — ասում էր Հէմբլօն: — Կարգալ չէք կարող, մինչև որ նախ «գիր կապելը» չը սովորէք: Թոյլ տուէք ինձ սովորեցնելու, չէ որ այդ իմ գործն է, սատանի արեւը վկայ: Մինչև սեսրտեմբեր ամիսը կը կարողանաք լաւ կարգալ, հաւատացնում եմ ձեզ:

Դասն աւնելուց յետոյ պառաւը գիրքը գրպանն էր դնում, որ տանի տուն և կրկնի ազատ ժամանակները, և հրաժեշտ տալով ծեր ուսուցչին, շնորհակալութեամբ ժպտում էր նրան իր փոքրիկ գորշ աչքերով:

Երբ սկստեմբերը հասաւ, պառաւ Լօրօն արդէն կարողանում էր բաւականին վարժ կարգալ տպածը. իսկ նամակները դեռ տանում էր կարգացնելու ուսուցչին, որն ինքն անգամ դժուարանում էր, յայտարարելով թէ իր աշակերտը «կորցրել է նախկին գրութիւնը»: Լօ-

րօն այլևս չէր դժուարանում, ազօթագիրքը նրա համար խաղալիք էր արդէն, նոյնիսկ նա կարող էր յաղթահարել լրագրի մանր տիպը: Հէմբլօն նրան հանգստացնում էր ասելով, թէ «Կուլիսների յետևի գաղանխքները» երևի խոշոր տառերով են տպագրւած:

Այգպէս էր ժան գը-Բրօի վերջին գրքի խորագիրը: Իր նամակներում նա ոչինչ չէր հազորդում այդ գրքի մասին, սովորականի պէս լուրթեան քօղով ծածկելով իր գրականական կեանքը, երևի նրա համար, որ շարունակում էր կարծել, թէ իր մայրն առաջվայ պէս անգրագէտ և տգէտ է:

Սակայն որդու գալուց մի քանի օր առաջ պառաւը սիրտ առաւ, հագաւ իր նոր շորերը և Մատիասի սայլակով գնաց քաղաք՝ իբր թէ մի քանի բաներ գնելու: Քաղաք հասնելուն պէս, նա իսկոյն տեղեկացաւ, թէ ինչ գրախանութներ կան այդտեղ, և գնաց պահանջեց ժան գը Բրօի վերջին գիրքը, չփոթւելով այնպէս, ինչպէս երբէք իր կեանքում պատահած չը կար: Տէր Առտունձ, ինչպէս նա կարմրեց գործակատարի ծաղրող և զարմացած հայեացքից: Երևի սա էլ պառաւին անզրագէտի տեղ ընդունեց և կարծեց, թէ նրա խելքը տեղը չէ,

որ գալիս է գնելու «ուսում առածներին» վայել մի գիրք:

— Դուք այդ հեղինակին ճանաչում էք, — հարցրեց նա ծայրոց ժպիտով:

Քիչ էր մնացել, որ պառաւն ասէր. «Սխր նա իմ որդին է: Նրա խոլական անունը Լօրօ է և ոչ թէ ժան դը-Բրօ», բայց մի բան նրան պահեց և շլթայեց ասելու: Պառաւր մտածեց թէ նա կարող էր չը հաւատալ, որ իր նման մի խեղճ կին արժանացած է մի այդպիսի փառքի: Որովհետեւ նա ոչ մի պատասխան չը տուաւ, սուտի գործակատարը շարունակեց:

— Լաւ, մենք կը ճարենք... Երևի ցանկանում էք «Կուլիսների ետևի գաղտնիքներ» գիրքը:

Լօրօն պիտի շարժուեմով գրական նշան արաւ:

— Սակայն մի շարթից վաղ չէք կարող ստանալ, որովհետեւ ես Պարիզից պէտք է բերել տամ. իսկ մեր պատուէրներն ուղարկում են միմիայն երեքշաբթի օրերը: Իսկոյն և եթ ձեզ կուղարկենք գիրքը:

Երեքշաբթի. մի շարթից յետոյ: Ուրեմն գիրքը կըստացվի միայն չորեքշաբթի օրը, իսկ ծանր պէտք է գայ կիրակի երեկոյեան՝ մօր անուանակոչութեան առթիւ: Զի յաջողվի

սիրարկից անել որդուն: Սրանեղութեամբ նա դուրս եկաւ գրախոսութից, արագութեամբ շնորհակալութիւն շնջալով: Քաղաքի փողոցներում մի քիչ թափառեց, որ հիասթափութեան դառնութիւնից ազատվի, և յետոյ գնաց ճարեց Մատիասին:

Ե՛հ, ինչ արած. յամենայն դէպս նա՛ իր երեխան կը զարմանայ և կուրախանայ: Որդու ներկայութեամբ նա կը կարգայ մի ուրիշ բան, նոյնիսկ լրագիր և գրանիւլ ցոյց կը տայ, թէ որպիսի ուսեան մայր է դառել. նա կը հաղորդի, թէ ինչ նպատակով է կարգալ սովորել. իսկ չորեքշաբթի օրը, երբ գիրքը կուղարկեն, ինչքան կուրախանան միասին կարգալիս: Սսենք՝ ցանկալի է վաղօրօք աչքի տակով անցկացնել այդ գիրքը, որ կարգալիս սխալներ չանի... Սակայն ինչ արած: Հեմբօն հաւատացնում էր, որ ամեն ինչ զարդ կը լինի:

Ծանր, ինչպէս խոստացած էր, եկաւ կիրակի երեկոյեան:

— Բարև, մայրիկ, բարև: Որքան տակաւին կայտառ ես և կարմիր: Դու աւելի թարմ ես, քան թէ ինձ հետ բերած վարդերը, տես...:

1001  
1629



Երևի Լազեյում ապրելը մարդուս երիտասարդացնում է...: Ինձ էլ է հարկաւոր այստեղ տեղափոխվել...: Շնորհաւորում եմ, իմ քնքոյշ մայրիկ, համբուրվինք մի անգամ էլ...:

Մայրն այլևս չէր կարողանում նրան համբուրել. նա ուրախութիւնից շնչասպառ էր լինում, տեսնելով իր սիրած երեխային, և միաժամանակ իր կրծքին էր սեղմում և նրա գլուխը և նրա բերած ծաղկէ փունջը: Նա խօսք չէր գտնում ասելու, և որդին էր միակ խօսուղը. խօսում էր և ուրախանում, որ նորից տեսնում է այն «գահլիճը», ուր անցել էր իր մանկութիւնը՝ այնքան հեռու, այնքան վճիտ իր յիշողութիւնների մէջ:

Փորրիկ ծանկտը կանգնած նայում էր նրանց, սպասելով իր հերթին. նա մեծ յարգանք էր տածում դէպի այդ պարտնը, որի մասին «արէրը» զմայութեամբ էր խօսում:

Վերջապէս ծանր դուրս արժաւ մայրական գրկից և համբուրեց իր մօրաքրոջ աղջկան՝ Տիկին Լօրօն ընկաւ բազկաթուռի վրայ՝ ուրախութիւնից թուլացած: Ծանր նստեց մօր կողքին: Նրա այցելութիւնները միակ պայծառ շողերն էին այս տանը, որը հօր մահից յետոյ դատարկ էր թւում: Մօրը ուրախութիւն էին պատճառում այդ այցելութիւնները, սրտնց յի-

շտութեամբ նա ապրում էր ամբողջ տարին: Եւ երբ նա հեռանում էր, մայրը միշտ մտածում էր իր որդու Պարիզում վարած ուրախ կեանքի մասին. այդ նրան մեծ սիփփանք էր պատճառում:

Ժանն իրապէս բաց սիրտ ունէր և լաւ որդի էր: Մտտաղ հասակում գալով Պարիզ, նա քսան տարեկանից սկսած խորասուզվեց գրականական աշխարհը, չունենալով եկամուտի ոչ մի աղբիւր բացի կայտառ գրչից և ենթարկվելով սովորական ինտրիգներին ու մի կտոր հաց ճարելու համար մղած պայքարի դժուարութիւնների: Սակայն նա արագութեամբ ճանապարհ հարթեց այդ ասպարէզում: Օժտված գործնական խելքով, աջողութիւն ունենալու փափագը սրտումը, հէնց սկզբից ուղիղ ճանապարհը գտաւ: Նա իւրացրեց թեթեւ ու սահուն ոճ, խուսափելով կոպտութիւններից, միացնելով անբարոյականութիւնը շքեղութեան հետ, ցոփ մտքերը սրամտութեամբ համեմելով և բարձր շրջանների սալօնների համար յօրինելով երկմիտ պատմութեանը կէս-աշխարհիկ կեանքեց: Մի քիչ սկանդալ, մի քիչ ճարպիկութիւն, չափազանց աջողութիւն, որը տարօրինակ կերպով հետևում է յայտնի տեսակի

մարդկանց,—և ահա մի քանի տարուց յետոյ որոշ գիրք ստեղծվեց նրա համար:

Սակայն հարստութեան ու փայլուն կեանքի մէջ նա չը մտադաւ իր զիւզը, ուսումնաբանը, վարժապետին և առաւել եւ իր պառաւ մօրը: Մօր հետ ունեցած յարաբերութիւնները մէջ մնաց առաջվայ սիրալիր և քնքոյշ «երեխան», կարծես երբէք հեռացած չը լինէր Լադէ: Մէլիէից: Երբ զիւզն էր գալիս, նրա մէջ չէր մնում կեանքից յափրած պարիզեցու և թեթև գրքեր գրուի հետքը: Նա կերպարանափոխվում էր, դառնում էր մի ուրախ մանուկ՝ մեծարող իր մօր սպիտակ մագերը: Երկու-երեք ամիսը մի անգամ նա մօր համար ուղարկում էր մի քանի հարիւր ֆրանկ, որ միջոց էր տալիս պառաւին զիւզում բարեկեցիկ կեանք վարելու: Ամեն ամիս Պարիզից նաւակներ էր ուղարկում, երկար եւ քնքոյշ նամակներ, որոնց մէջ գրում էր միմիայն մօր մասին, զիւզի մասին. իսկ տարին մի անգամ մօր անուանակոչութեան առիթով գալիս էր զիւզը և իր հետ բերում էր ծաղիկայ փունջ:

րօն ծանից խնդրեց, որ միւս սենեակից լրագիրը բերի:

—Ուրեմն դու լրագիր ես ստանում,— հարցրեց ծանը, ինչից է պէտք լրագիրը:

—Ո՛չ, լրագիրն իմը չէ: Պ. Հէմբլօն է ինձ փոխ տալիս:

—Էլ ինչու ես վերցնում լրագիրը, երբ կարգալ չես իմանում,— ծիծաղելով ասաց նա:

—Սհաւաստիկ կըտեսնես,— պատասխանեց մայրը: Նրա փոքրիկ գորշ աչքերը խորամանկ ժպիտով նայեցին ակնոցների վերեւից, որ այդ ժամանակ քթին էր գրել:

Ծանէտը, որն ամեն ինչ գիտէր, սրտանց քրքջում էր:

—Սնկարելի բան է,— արտասանեց որդին:— Միթէ կարգալ սովորել ես, մայրիկ: Ի հարկէ, կատակ ես անում:

—Սնկարելի բան է: Այ հարցրու ծանէտից, կամ պ. Հէմբլօից, որն ինձ հետ շարչարվել է մի ամբողջ տարվայ ընթացքում... Գիտես, ինձ համար խիստ ծանր էր գալիս, որ ես չեմ կարողանում քո գրուածքները կարգալ: Եւ ահա ես սկսեցի սովորել: Յանկանում էի քեզ սիրալիրից անել և քո ներկայութեամբ գրքից կարգալ, նոյնիսկ քաղաք գնացի գրախանութից... Տէր Աստուած, չեմ

կարողանում յիշել, թէ ինչպէս է նա անուանվում, քո վերջին գիրքը... Իսկ ես համոզված էի, որ կը յիշեմ:

Ժանը յուզմունքից յանկարծ սփրտնեց: Նա թոթովեց.

— Մայրիկ, դու այդ արիր, սր... որ ինձ ուրախացնես... Ուրեմն գիրքը մտոգ է:

— Հէնց բանն էլ այն է, որ չը կարողացայ ձեռք բերել գիրքը: Գրավաճառն ասաց, թէ չորհրշաբթի օրը կուղարկի, որովհետեւ գիրքը Պարիզից պիտի բերել տայ: Այժմ ուրեմն լրագիրը պիտի լսես, իմ ծիտիկ: Գնանք բեր, պահարանի մէջ է, հացի մօտ դրած:

Նա բերաւ, մօրը տուեց տեղական լրագրի մի համարը:

— Գէ, լսիր, — ասաց մայրը, գողգոջիւն ձեռքերով լրագիրը բաց անելով և ակնոցներն ուղղելով:

Պառաւր սկսեց համարձակ կարգալ, սակայն ձայնը թեթեակի դողում էր: Այդ միջոցին ժանը, ձեացնելով, իբր թէ լսում է, իրապէս ոչինչ չէր հասկանում, որովհետեւ խորատուզված էր իր խոհերի մէջ, շարունակ նայում էր մօր միամիտ ու սուր երեսին և դարհաւրանքով մտածում էր, սր նա պիտի կարգայ իր յօրինած գրքերը, երեւ ինչ—ինչ բաներ

նոյն իսկ արգէն կարգացած կը լինի: Բայց ոչ. նա դեռ ոչինչ չէ կարդացել, այդ պարզ է: «Կուլիսների ետիւ գազանիքները» նրա պատուիրած առաջին գիրքն է: Ուրեմն դեռ ուշ չէ:

Մինչդեռ մայրը կարգում էր, խորատուզված լինելով ընթերցանութեան մէջ և ժամանակ շունենալով նկատելու, թէ ինչ ազդեցութիւն է անում իր օրդու վրայ, վերջինս շարունակում էր իր մտածմունքներն սրտնալ: Նրա գլխից երբէք չէր անցել, որ իր հեղինակութիւնները՝ միջավայրից փշացած մի պարիզեցու գրչի արտադրութիւնները—կարող են երբ և իցէ ընթերցանութեան նիւթ դառնալ այդ ձեռք գեղջկուհու համար, որն իր գաշտերի մէջ մնացել էր անարատ և բարի: Շուտով այդ կիրականանայ: Տէր Աստուած, իր գրքերն այս խրճիթում. նրանց պիտի կարգան այդ մանր գօրշ աչքերը, որ անմեղութիւնից գրկվեն՝ շնորհիւ իր ցինիկական պատմութեան: Նրա սիրտը ճմլվում էր: Միշտ նա պարծենում էր, որ ինքն ազնիւ մարդ է մնացել այդ անառողջ միջավայրում, ուր բերել—ձգել էր նրան կեանքը. իսկ այժմ այդ աղնութիւնը նրան խիստ կատկածելի էր թւում: Նա երբէք չի ցանկացել ոչորի վնաս պատճառել, երբ գրում էր անհեթեթ պատմութեանը. նա գուարճացնում

էր հասարակութիւնը և լաւ փող էր վստահու-  
կում: Ինչու համար նրա խիղճը պիտի տանջ-  
վէր: Եւ յանկարծ, այդ բոսլէին նրա գրական  
անբողջ գործունէութիւնը նրան թւաց  
ոճրալից և անմարտի, և նա ցանկանում էր  
ոչնչացնել, այրել իր բոլոր գրքերը, միայն թէ  
իր պառաւ մօր աչքերին չընկնէին:

Ամենից շատ նրան ծանր էր գալիս մօր  
միամիտ հեղարտութիւնը, այն սրտաշարժ ու-  
րախութիւնը, որ նրան պատճառում էր  
իր որդու ձեռք բերած «փառքը»: Եթէ նա  
իմանար այդ փառքի էութիւնը, թէ ինչի՞  
վրայ է նա հիմնված: Այդ միտքն այժմ ամօ-  
թից խոցոտում էր ծանի սիրտը: Նա ցանկա-  
նում էր աղագակել, որ ինքն անարժան է մայ-  
րական հպարտութեան, որ մայրը պէտք է ամ-  
օթից կարմրէր և ոչ թէ այդպիսի որդով  
պարծենար: Սակայն չէր կարող այդ անել.  
նրան պահում է գէպի մօրը տածած սէրը:  
Այսուհետև նրան պէտք է պատժէ, նրա կեան-  
քը պէտք է թունաւորէ այն միտքը, թէ նրա  
պառաւ մայրը, որը մինչև վաթսուն տարեկան  
հասակը կարգալ չի սովորել՝ ազօթագիրքը ջու-  
կելու համար, այժմ այբուբենի վրայ դուխ է ճա-  
քացրել, թէ ինչ է կարողանայ կարգալ ծան գը-  
հրօթ ամօթալից, ցինիկական պատմուածքները:

Պառաւը կարգալը վերջացրեց և թաշկի-  
նակով ճակատը ու շրթունքները սրբելով,  
դարձաւ գէպի ծանր, որ նրա արտայայտած  
գարմանրից զուարճանայ: Սա խսկոյն զգաստ-  
վեց և բացականչեց ժպտալով.

— Կեցցես, մայրիկ, կեցցես: Դու քո ու-  
սուցչից աւելի լաւ ես կարգում: Ես երբէք չէի  
հաւատալ, ծանէտ, եթէ նոյն խոկ միլիօնաւոր  
մարդիկ պատմէին դրա մասին:

Նա համբուրում էր մօր ձեռքերը և խընդ-  
րեց մի քիչ էլ կարգալ: Նա խօսում էր շին-  
ծու աշխոյժով, ցանկալով իր առաջվայ վրդով-  
մունքը թագցնել: Մայրը երջանկութիւնից  
փայլում էր և երեխայի պէս ծիծաղում էր:

— Ես վաղօրօք գիտէի, որ այդ քեզ բա-  
ւականութիւն կը պատճառէ, — ասաց մայրը: —  
Բայց դարձեալ ափսոսում եմ, որ այժմ անկա-  
րող եմ քո գրքերից մէկը կարգալ: Ուրբան ափ-  
սոսում եմ, որ առաջուց չեմ մտածել զիրք  
գնելու մասին: Է՛հ, լաւ է ուշ, քան երբէք,  
ինչպէս ասում են: Ձէ որ չորերշաբթի օրը  
դեռ այստեղ կը լինես, հոգեակա:

— Այո, այո, մայրիկ: Սակայն չեմ իմա-  
նում, դեռ յայտնի չէ: Հինգշաբթի պէտք է որ  
Պարիզ գտնվեմ, ժողով ունենը: Լսիր, մայրիկ,  
այդ ոչինչ, որովհետև, դիտես, չեմ իմանում,



արդեօք գրավաճառը կը կարողանայ իմ վերջին գիրքը ճարիչ. ես անբաւական էի մնացել այդ գրքից, ուստի հրատարակչին պատուիրել էի, որ հրատարակէ սակաւաթիւ օրինակներ, որոնք, երևի, արդէն սպառված կըլինեն: Եթէ ցանկանաս, ճանապարհին կը մտնեմ գրավաճառի մօտ և կասեմ նրան, որ քեզ ուղարկէ իմ ապագայ գիրքը, որը պիտի գրեմ և որը պէտք է աւելի, շատ աւելի լաւ լինի մնացածներին: Այդպէս էլ վճռենք: Եկող գարնանը դու կը ստանաս իմ նոր գիրքը:

Մինչդեռ նա խօսում էր, իր ամերի մէջ բռնած մօր ձեռքերը, նա նկատեց մօր երեսի վրայ դառն հիասթափութիւն և աչքերին արտասուք: Ուրեմն այդքան երկար ժամանակ սպասված ուրախութիւնը յետաձգվում է մինչև գարունը:

Մինչև գարունը, որքան ուշ: Տէր Աստուած: Ինչ արած, երբ ժանն այդ է ցանկանում, ի հարկէ, այդպէս էլ կը լինի: Ինչ որ նա ասաց, այնպէս էլ կը կատարվի, մայրն առանց բողբոջի հնազանդվեց օրդուն, որովհետեւ նրան սիրում էր: Իսկ մինչև գարունը նա կը շարունակէ սովորել և յետոյ հեշտութեամբ կը կարգայ գիրքը: Սակայն ափսոս որ այդ ուրախութիւնը հեռանում է:

Ժանն շարունակեց քնքշութեամբ.  
— Հասկանում ես, մայրիկ, իմ ցանկութիւնն է, որ դու սկսես կարգալ նախ իմ ամենալաւ գիրքը: Եւ դու կը տեսնես, թէ որքան շատ կը խօսեն նրա մասին: Իմ միւս գրքերը... նրանց մէջ գրուած է միւսիայն Պարիզի մասին, այդ քեզ հետաքրքրել չէ կարող: Բայց նոր գիրքը լաւ կը լինի, խոստանում եմ քեզ, և դու բարձրաձայն կը կարգաս ժաննիտի և ծեր Հէմբլօի մօտ:

Հետզհետէ նա ինքն էլ սկսեց ոգևորվել, պատմելով նոր գրքի մասին, որ պիտի գրէ այս ձմեռը: Այո, դա կը լինի մի հրաշալի պատմուածք, որ կարելի կը լինի կարդալ ձմեռը տաք վառարանի մօտ: Նա կը գայ Կիւղը գրելու: Այստեղ, իր մանկութիւնը յիշեցնող դաշտերի մէջ... Իր պատմուածքի մէջ լսելի կը լինեն դպրոցից դուրս եկող երեխաների ապագակները, վերջնալոյսի ժամանակ գիւղ վերադառնող սայլակների ճոճոցը, ձորի մէջ երգող թռչունների դայլայլիկը, եկեղեցու դանդակի հանդիսաւոր զօղանջիւնը, սարերի—ձորերի և քաջառողջ գիւղական կեանքի բազմազան ձայները: Եւ հաւանական է, որ այդ գրք-

քում առաջի տեղը պիտի բռնի պառաւ գեղջ-  
կուհու անարատ դիմքը:



Նա կատարեց իր խօսքը: Ամբողջ ձմեռը  
և գարունը ծան Լօրօն, որ անհետացել էր  
Պարիզի հօրիզօնից, անցկացրեց Լադէյ-Մէլլիէ  
գիւղում իր մօր և ժանէտի հետ:

Եւ աշնանը, մօր անուանակոչութեան  
օրը, նա իւր հետ բերաւ գեղին կազմով մի  
գեղեցիկ գիրք, որը հեղինակին աւելի աշխա-  
տանք և բաւականութիւն էր պատճառել, քան  
թէ մնացած բոլորը միասին վերցրած: Գիրքը  
բաց արին հէնց նոյն ոննեակում, ուր նա  
մտածված և համարեայ ամբողջովին գրված էր:  
Պառան ակնոցները դրեց իր մանր գորշ աշ-  
քերին և ուրախութիւնից սփրանած՝ կարգաց  
առաջի երեսի վրայ. «Նուիրում եմ իմ թան-  
գազին մօրը»:



Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

Main body of faint, illegible text, appearing to be bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is mostly illegible due to fading.





ՀՀ Ազգային գրադարան



NL0311063

4535